Երևանի պետական համալսարանի

կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի

2017 թ. փետրվարի 17-ին կայացած թիվ 7 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 34-ը:

Օրակարգում՝

- Ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման երաշխավորման հարցը
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգ
- Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը
- Թեկնածուական ատենախոսությունների թեմաների վերահաստատման հարցը
- Հաշվետվություն մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ
- Ընթացիկ հարցեր

- **Ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ներկայացրած Ա.Ա. Աղաջանյանի և Ա.Հ. Թռչունյանի «Բույսերի կենսաքիմիա» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Բույսերի կենսաքիմիա» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման:

- **Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգ**

- **Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանի հաղորդումը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի վերաբերյալ: Է.Ս.Գևորգյանը մանրամասնորեն ներկայացրեց նոր ծրագրերով կազմակերպման կարգը, հատկապես մատնանշելով տարբերությունները:

- **Թեկնածուական ատենախոսությունների թեմաների վերահաստատման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ավագ լաբորանտ, գործավար, Հայ-Ռուսական Համալսարանի հայցորդ Սյուզաննա Սուրենի Բլբուլյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը՝ վերահաստատել Սյուզաննա Բլբուլյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «*«Escherichia coli-ի* ԱԵՖ-ազային ակտիվության բնութագրումը գլիցերոլի խմորման պայմաններում»» Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ:

ԼՍԵՑԻՆ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հայցորդ՝ Սիլվա Արայի Գևորգյանի «Ջրերի մաքրումը ծանր մետաղներից բնական նյութերի հիման վրա ստացված կոմպոզիտային սորբենտներով» թեմայով թեկնածուական ատենախոսության ԻԴ 04.01 «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ պաշտպանության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Սիլվա Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015 թ. փետրվարի 17-ին կայացած թիվ 5 նիտում հաստատվել է ԻԴ.04.01 «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/ : Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը գտնում է, որ Ս.Ա. Գևորգյանի ՝ «Ջրերի մաքրումը ծանր մետաղներից բնական նյութերի հիման վրա ստացված կոմպոզիտային սորբենտներով» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ԻԴ 04.01 « Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ համապատասխանում է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

ԼՍԵՑԻՆ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի հայցորդ Լուսինե Սերգեյի Հայրապետյանի՝ «Թափոնաջրերի գործընթացում կիրառվող պոլիակրիլամիդային կատիոնային պոլիէլեկտրոլիտի ֆլոկուլացնող հատկությունների ուսումնասիրությունը» թեմայով թեկնածուական ատենա-խոսության ԻԴ 04.01 «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ պաշտպանության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լուսինե Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015 թ. փետրվարի 17-ին կայացած թիվ 5 նիտում հաստատվել է ԻԴ.04.01 «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/ : Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհուրդը գտնում է, որ Լ.Ս.Հայրապետյանի՝ «Թափոնաջրերի գործընթացում կիրառվող պոլիակրիլամիդային կատիոնային պոլիէլեկտրոլիտի ֆլոկուլացնող

հատկությունների ուսումնասիրությունը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ԻԴ 04.01 « Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ համապատասխանում է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

- **Հաշվետվություն մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ**

ԼՍԵՑԻՆ՝ դեկանի տեակալ Կարեն Ղազարյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկայի մասին: Նա ներկայացրեց դպրոցները և պրակտիկաների ղեկավարներին: Կ. Ղազարյանը նշեց, որ թե պրակտիկաների ղեկավարները, թե հոգեբան-մանկավարժները առանձնակի գոհունակություն են հայտնել մեր ուսանողների անց կացրած դասերի որակից:

- **Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ՝ ուսանողական խորհրդի նախագահ Տիգրան Գաբրիելյանին: Նա ներկայացրեց ուսանողների բողոքները որոշ առակաների լաբորատոր պարապմունքների վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանին հետևյալ հարցերի վերաբերյալ.

ա/ Մագիստրոսական ծրագրերի փորձաքննության արդյունքների ամփոփում

բ/ Ֆակուլտետի գ/հ ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ լաբորատորիաների 2018 թ. հայտերի ներկայացում

գ/ Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթ

դ/ «Երիտասարդ գիտնականներին աջակցության ծրագրին» մասնակցության մասին

ե/ ԵՊՀ 100 - ամյակին նախատեսվող ֆակուլտետի պատմության ձեռնարկի պատրաստման հանձնախբի կազմի քննարկում

զ/ Ֆակուլտետի ուս. խորհրդի և ուս. Գիտական ընկերության միջոցառումներին դասախոսների և գիտական կազմի մասնակցության մասին

է/ ԵՊՀ-ում, կենսաբանության մասնաշենքում, հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման մասին:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ Ա.Ֆ.Կարապետյան